

Գևորգ Ա. Ճաղարյան

**ԹՈՄԱՍ ԲԱՐԼԱՅԼԻ «ՀԵՐՈՍՆԵՐԻ,
ՀԵՐՈՍԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ՀԵՐՈՍԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ» ԵՐԿԸ**

Մաս առաջին: Գրության առիթն ու հանգամանքները*

Բանալի բառեր – հերոսապաշտություն, **Վիկտորիանական** դարաշրջան, **խանդավառություն**, Թ. Քարլայլ, հերոսներ, բանախոսություն, Ռ. Ու. Էմերսոն, **դրապաշտական** պատմագրություն, Յ. Գ. Ֆիխտե, Դ. Հյում, գերմանական միտք, **մեխանիզմի** դարաշրջան, Զ. Բենթամ, օգտապաշտություն:

Մուտք

Վիկտորիանական դարաշրջանը, որ պարառում է 19-րդ դարի զգալի հատվածը, աննախընթաց փոփոխությունների ժամանակաշրջան էր Մեծ Բրիտանիայի ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային կյանքում: **Արդյունաբերական հեղափոխությունը**, որ սկիզբ առավ 18-րդ դարի կեսերից ու տևեց ավելի քան մեկ դար, և հարդյունս որի Մեծ Բրիտանիան վերածվեց աշխարհի ամենահարուստ երկրի, առաջ բերեց նաև վիթխարի սոցիալական խնդիրներ, որոնք հետևանք էին քաղաքային արդյունաբերության սրընթաց զարգացման:

Դարաշրջանը **հակասական** էր. առաջընթացին, բարեփոխումներին ու քաղաքական կայունությանն ընթեր էին աղքատությունն ու սոցիալական անարդարությունը: Դրան զուգահեռ՝ մտակերտվածքի արմատական կերպափոխությունը թեև առաջին հայացքից նվազ ակնհայտ էր, սակայն հստակ էր մի բան՝ մտածողության ավանդական կաղապարներն արդեն ոչ ևս էին¹: Այս առումով, կրոնականից գատ, դարաշրջանն անցումային էր նաև բարոյական ու ինտելեկտուալ բազում իրողությունների և հիմնախնդիրների տեսանկյունից, որոնք պատմության երկար տևողության ծիրում

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.09.2020:

¹ Տե՛ս **Walter E. Houghton**. The Victorian Frame of Mind, 1830-1870. New Haven and London: Yale University Press, 1985, էջ 8:

վաղուց լուծված էին համարվում, բայց սույն դարաշրջանում կրկին խնդրո առարկա դարձան²: Ընդհանրական այս տրամադրությունն էր տիրում, օրինակ, դարաշրջանի երևելի մտածողներից Թ. Մաքուլեյի ու Թ. Քարլայլի վաղ շրջանի հոդվածներում, որոնցում իբրև առաջնային անհրաժեշտություն էր դիտվում **նորացումը** (ինտովացիա): 1831 թ. Քարլայլը գրում էր. «Հինն անցել-գնացել է, բայց դրա փոխարեն նորի հայտնությունը դեռ տեսանելի չէ. ժամանակը **նորի երկունքի մեջ է** (ընդգծումը մերն է - Գ. Ճ.)»³:

Ահա մտածողության **նոր կերպերի** առաջացման ու իմաստավորման դրսևորումներից էր նաև Թ. Քարլայլի կողմից «**հերոս**»-ի, «**հերոսական**»-ի ու «**հերոսապաշտության**» հղացքների քննությունը Վիկտորիանական Անգլիայի հասարակական-քաղաքական մտքի տարրապատկերում:

1. Հերոսը և հերոսականը Վիկտորիանական դարաշրջանում

Թեև հերոսապաշտությունը մշտապես առկա է եղել պատմության հոլովույթում և գործուն է նույնիսկ մեր օրերում՝ մաս կազմելով հատկապես արևմտյան քաղաքակրթության մտահոգևոր ընկալումների ու փորձառության, բայց իր ամբողջության մեջ այն գլխավորապես 19-րդ դարի երևույթ է⁴, «կրոնական կամ ընկերային ամենայն հնարավոր բարիքի հիմքը՝ ի շահ մարդկության»⁵: Ոչ մի այլ դարաշրջանում հասարակական ամբողջն այդքան **մտահոգ** չէր ականավոր անհատների՝ իբրև տիպարների ընդօրինակմամբ, որքան Վիկտորիանականում: Լայն տարածում ունեին հերոսական առասպելները, կենսագրություններն ու վարքերը: Միջնադարյան ասպետների ու առասպելական հերոսների (հունահռոմեական, կելտական, հինսկանդինավյան) մասին պատումները լայնորեն ընթերցվում էին Թ. Մելորիի ու Ժ. Ֆրուսսարի երկերի նոր հրատարակություններում, ինչպես նաև Ա. Թենիսոնի, Մ. Առնոլդի ու նախառաֆայելյանների պոեզիայում⁶:

Վիկտորիանական հերոսապաշտության դրսևորման մեկ այլ գործոն էր ռոմանտիկական **խանդավառության/մոլության** (enthusiasm) վերահայտնագործումը⁷: Նորդասականության (նեոկլասիցիզմ) շրջանում այն

2 Տես նույն տեղում, էջ 9:

3 **Thomas Carlyle**. "Characteristics", in *Critical and Miscellaneous Essays* (1838, այսուհետ՝ *Essays*), 5 vols., in the Centenary Edition of Carlyle's Works, ed. by **H. D. Traill**, 30 vols. New York, 1896-1901, vol. 3, p. 32.

4 Տես **Walter E. Houghton**, նշվ. աշխ., էջ 305:

5 **Thomas Carlyle**. *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*. Edited by **David R. Sorensen** and **Brent E. Kinser** (Rethinking the Western Tradition). New Haven and London: Yale University Press, 2013, p. 110. Տես նաև **Thomas Carlyle**. *Essays on Literature*. Ed. **Fleming McClelland**, **Brent E. Kinser**, and **Chris R. Vanden Bossche**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Oakland: University of California Press, 2020, էջ 278-279 (այսուհետ՝ *Essays on Literature*):

6 Տես **Walter E. Houghton**, նշվ. աշխ., էջ 305:

7 Տես **Michael K. Goldberg**, *Introduction*, in *On Heroes, Hero-Worship, and The Heroic in History*. Ed. **Michael K. Goldberg**, **Joel J. Brattin**, and **Mark Engel**. The Norman and Charlotte Strouse Edition of the Writings of Thomas Carlyle. Berkeley & Los Angeles: University of California Press, 1993, էջ xxxiii:

ծաղրական իմաստ ուներ և բնորոշում էր կրոնական մոլեռանդներին, որոնք իրենց տառացիորեն «**νθεος**» (en-theos, «Աստծով մոլյալ») էին զգում⁸: Այնինչ ռոմանտիկական տեսությունն ու զգացականությունը **էնտուզիազմը** զավեշտից փոխարկեցին հուզական (emotional) վերապրումի ու [աստվածային] զորության⁹: Քանզի հերոսների պաշտամունքը, դրա գլխավոր քարոզչի խոսքերով, «անսահման հիացմունք» է, իսկ հերոսապաշտը՝ մի **մոլյալ** (enthusiast), որ «կարող է անսահմանորեն սիրել իր հերոսին կամ իմաստունին (sage), իդեալականացնել ու երկրպագել նրան»¹⁰: Այսպիսով՝ վերոբերյալի խորապատկերին վիկտորիանական մտավորականները «**հիացմունք**»-ի (adoration) հղացքը վեր դասեցին ամեն ինչից, հստակացրին ու բանաձևեցին այն՝ առաքինությունից վերածելով կրոնի և կոչելով **հերոսապաշտություն**¹¹: Այսօրինակ ըմբռնումն արդեն արմատական խզում էր նշանավորում նախորդ դարի բանապաշտական (ռացիոնալիստական) դիրքորոշումներից, երբ Դ. Հյումն ու Է. Գիբբոնը հերոսականը դիտարկում էին բացառապես բանականության ռապիդակով՝ համարելով այն անձնական նկրտումների ու հավակնությունների քողարկու դիմակ¹²:

Այսուհանդերձ, նման ընկալումները կարող էին լծորդված լինել նաև **ընտրյալների** (elect) բողոքական գաղափարին, և Թոմաս Քարոլայն այս իմաստով ականատեսն էր ռոմանտիզմի ու պուրիտանիզմի արտառոց, բայց արգասավոր միահյուսման, որի ծիրում ավելի քան ակներև էին վիկտորիանական հասարակության՝ մարդկանց մասին երկու հիմնարար՝ «**հերոսներ**» և «**հասարակ մահկանացուներ**» ստորոգություններով մտածելու հակումները¹³: Հասարակություն, որի անդամներից շատերը իրազեկ չէին զանազան գեղագիտական տեսություններից ու գրական շարժումներից, և հերոսի ու հերոսականի նրանց ընկալումներն ուղղակիորեն բխում էին առավելապես **Վալտեր Սքոթի**՝ ավատատիրական անցյալի տեսականից և **Ջ. Բայրոնի** «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմից, բայց ամենից առաջ՝ նապոլեոնյան պատերազմներից, երբ «առ մեծություն ու ճշմարիտ փառք բաղձանքը» բորբոքվում էր մեծ անհատների պատկերաշարով՝ անտիկ և նոր¹⁴:

Դարաշրջանը տվել էր երկու կարկառուն անհատներ, որոնց միայն փառքն ու հռչակը բավական էին՝ բովանդակ հասարակությունը հերոս-

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս նույն տեղում:

10 **Thomas Carlyle**. "Goethe's Works", in Essays, vol. 2, p. 391. Հմնտ.: Ջ. Ուաքին. «Երեք ռոմանտիկական կրթերը նրանք են, որոնցով, ինչպես Ուորդսուորթն է ասում, սնվում է հոգու կյանքը. «Մենք ապրում ենք Հիացմունքով, Հոյսով ու Սիրով»: **Հիացմունքը**, առաջին հերթին, [ենթադրում է] հերոսապաշտության բոլոր ձևերը...» (**John Ruskin**. "The Art of England", Lecture 2, in Works, ed. by E. T. Cook and A. D. O. Wedderburn, 39 vols. London, 1902-1912, vol. 33, p. 292):

11 Տե՛ս **Edmund Gosse**. "The Agony of the Victorian Age", in Some Diversions of a Man of Letters. London: William Heinemann, 1920, էջ 336:

12 Տե՛ս **Walter E. Houghton**, նշվ. աշխ., էջ 306:

13 Տե՛ս նույն տեղում:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 308:

սագիտակից դարձնելու. **Հորացիո Նելսոն** և **Արթուր Ուելլինգթոն**¹⁵: Կենսագրական բնույթի իր առաջին հոդվածներից մեկում Թ. Քարլայլը գրում էր, որ Նելսոնի սխրանքներով «իր հայրենակիցների հիացմունքը վերաճեց խանդավառության»¹⁶ հերոսի հոմանիշ դարձնելով նրա անունը¹⁷: 1815–1852 թթ. Անգլիայում հենց միայն իր ներկայությամբ Ուելլինգթոնը տիպարն էր Քարլայլի այն հանրահայտ դրույթի, ըստ որի՝ մեծ անհատը հանձար է՝ ունակ միաժամանակ լինելու թե՛ զինվոր, թե՛ պետական այր, ինչը վիկտորիանական հերոսապաշտության մեծագույն փաստարկն էր¹⁸:

Մյուս կողմից՝ նշյալ դարաշրջանում սասանվում էին կրոնական հավատի ավանդական ընկալումները, Աստվածաշունչը հանգեցվում էր լոկ սնահավատություններով լի պատմական վավերագրի, իսկ Եկեղեցին այլևս չէր ընկալվում իբրև աստվածային տաճար¹⁹: Արդ, Աստծուն սկսում են փնտրել բնության ու պատմության մեջ: Այս պարագայում աստվածային կամքը դրսևորվում է մարդկանց գործերում, աստվածային հղացումները՝ պատմական ժամանակում, իսկ բարոյական օրենքն ի կատար է ածվում ազգերի ու ժողովուրդների վերելքի ու անկման տեսքով: Այստեղից էլ՝ ականավոր անհատների՝ իբրև **աստվածային հայտնությունների** (revelation) ու **աստվածային կամքի իրագործողների** մասին կրոնական հղացքը²⁰: Ուստի երբ Վիկտորիանական դարաշրջանում Աստվածաշունչն ու Եկեղեցին այլևս ի զորու չէին հագուրդ տալու հասարակության հոգևոր-կրոնական բնագոյներին, հերոսը և հերոսականը սկսում են հանդես գալ որպես աստվածային ոգու նոր դրսևորումներ:

Այսպիսով՝ Վիկտորիանական դարաշրջանի մեկնարկից առաջ հերոսապաշտության բոլոր անհրաժեշտ նախադրյալներն առկա էին՝ **խանդավառ հոգեվիճակ**, «**մեծ անհատ**»-ի **հղացքը**, **հոմերոսյան առասպելաբանության** ու **միջնադարյան վիպերգերի վերազարթոնքը**, **Վ. Սքոթի** ու **Ջ. Բայրոնի լայն ժողովրդականությունը** և **նապոլեոնյան պատերազմների մասնակից զինվորների** ու **զորավարների կենդանի ներկայությունը**²¹: 1830 թվականից մինչև 1880-ական թթ. հերոսների պաշտամունքը բրիտանական մշակութային գիտակցության գերակա գործոններից էր:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 309: Հատկապես ազգային հերոսների այս շեշտադրումը պայմանավորված էր զլխավորապես 19-րդ դարում հարաճուն ազգայնականության դրսևորումներով, ուստի պատահական չէ, որ հերոսների առաջին շարքում էին նապոլեոնյան պատերազմների մասնակից անգլիացի զորավարներն ու ռազմաքաղաքական գործիչները: Հետևաբար Վիկտորիանական Անգլիայում հայրենասիրական զգացումները ևս հերոսական անձնավորության ու ինքնագոհության խթանիչներ էին, իսկ հայրենասիրական հերոսապաշտության ազգայնական ու բարոյական գործառույթները հակված էին միաձուլման:

16 **Thomas Carlyle**. “Nelson” (1822), in *Montaigne and Other Essays, Chiefly Biographical*. London: James Gowans and Son., 1897, p. 75.

17 Տե՛ս նույն տեղում, էջ 91:

18 Տե՛ս **Walter E. Houghton**, *ՈՉՎ. աշխ.*, էջ 309:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 315:

20 Տե՛ս նույն տեղում (նաև՝ *Ժնթգր.* 35):

21 Տե՛ս նույն տեղում, էջ 310:

2. Բանախոսության ժանրը և Թոմաս Քարլայլը

1837–1840 թթ. Թ. Քարլայլը հանդես եկավ բանախոսությունների չորս շարքով՝ **գրականության, քաղաքականության ու պատմության** վերաբերյալ²²: Այս բանախոսությունները եկամտի անգնահատելի աղբյուր էին նրա համար: Ի տարբերություն հարաձուն հեղինակության՝ նրա նյութական դրությունը մտահոգիչ էր:

Առհասարակ Վիկտորիանական Անգլիայում բանախոսությունը մի յուրատեսակ ժանր էր, և հանրային հարթակի վրա շատ երևելի դեմքեր էին նախորդել Քարլայլին, իսկ շատերն էլ դեռ հետևելու էին նրա օրինակին: Նրանց թվում էին **Սեմյուել Քոլրիջը, Ուիլյամ Հեգլիթը, Թոմաս Դե Քուինսին, Սիդնի Սմիթը, Ուիլյամ Թեքերեյը, Չարլզ Դիքենսը**²³: 19-րդ դարի առաջին կեսի մտավորական միջավայրն առլեցուն էր բանախոսներով ու ունկնդիրներով, և տիրապետող էր այն ընկալումը, թե, Սեմյուել Ջոնսոնի խոսքերով ասած, «ամեն բան պետք է ուսուցանվի բանախոսություններով»²⁴:

Բանախոսելու թերևս միակ խթանը Քարլայլի համար ֆինանսականն էր²⁵: Դատելով օրագրերից ու նամակներից՝ բանախոսությունը հոգեմտավոր ծանր փորձություն էր նրա համար²⁶: Մյուս կողմից, սակայն, Քարլայլն այն համարում էր «մարզաբեության ու թատերախաղի (play-acting) խառնուրդ», որը հարկ էր կատարելագործել՝ իբրև բարոյական ձշմարտությունների հաղորդման գործը գործիք²⁷:

Հանրային բանախոսության ոլորտում Քարլայլի համար յուրատեսակ խթան հանդիսացավ նաև դեռևս 1833 թ. Ռ. Ու. Էմերսոնի այցը Շոտլանդիա: 1835 թ. ապրիլի 30-ին Քարլայլին հղած նամակում նա գրում էր, որ հարկ է «դադարել ընդդիմանալուց, փոխարենը պետք է ցանկացած թե-

22 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xxii: Դրանք են «Բանախոսություններ գերմանական գրականության մասին» (1837). 7 բանախոսություն, անտիպ (տե՛ս, սակայն, Carlyle's Unfinished History of German Literature. Ed. **Hill Shine**. Lexington: University of Kentucky Press, 1951), «Բանախոսություններ գրականության պատմության մասին» (1838). 12 բանախոսություն, հրապարակվել են հետմահու երկու հրատարակություններում Lectures on the History of Literature. Ed. **J. Reay Greene**. New York: Scribner, 1892 և Lectures on the History of Literature. Ed. **R. P. Karkaria**. London and Bombay: Curwen, 1892, «Բանախոսություններ արդի Եվրոպայի հեղափոխությունների մասին» (1839). 6 բանախոսություն, անտիպ (տե՛ս, սակայն, **Richard Herne Shepherd**, ed. *Memoirs of the Life and Writings of Thomas Carlyle*. 2 vols. London: W. H. Allen, 1881, vol. 1, էջ 197-214, «**Examiner**» լրագրի գրառումների համար), և վերջապես «Հերոսների, հերոսապաշտության և մարդկության պատմության մեջ հերոսականի մասին» (1840) (տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xxi, ծնթգր. 1):

23 Տե՛ս նույն տեղում, էջ xxiii:

24 Նույն տեղում:

25 1838 թ. մարտի 16-ին Ռ. Ու. Էմերսոնին հղած նամակում Քարլայլը գրում էր, որ ինքը «բանախոսության սրահ մտավ կարիքի սվինների դրոմամբ» (The Collected Letters of Thomas and Jane Welsh Carlyle. Ed. by **C. R. Sanders, K. J. Fielding, C. de L. Ryals, Ian Campbell, John Clubbe, Aileen Christianson, Hilary J. Smith, Janetta Taylor, Bill Bell**. 46 vols. to date. Durham, N. C.: Duke University Press, 1970 on, vol. 10, p. 52, այսուհետ՝ Letters): Իսկ նույն թվականի հուլիսի 27-ին եղբորը հղած նամակում գրում էր. «Եթե սոսկալի քաղցը հալածի ինձ, կբանախոսեմ, հակառակ դեպքում ոչ» (Letters, vol. 10, p. 134):

26 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xxii:

27 Տե՛ս նույն տեղում: Տակավին 1835 թ. փետրվարի 3-ին Էմերսոնին հղած նամակում Քարլայլը գրում էր. «Հրապարակային ելույթները մշտապես գրավել են ինձ: Կարծում եմ, որ իսկապես կարող էի լող տալ այդ տարերքում, եթե երբևէ նետված լինեի դրա մեջ» (Letters, vol. 8, p. 42):

մայի շուրջ բանախոսություններով ներագդել բոլոր ունկնդիրների վրա»²⁸: Մեկ տարի անց՝ 1836 թ. ապրիլի 8-ին, Էմերսոնը շարունակում էր համոզել Քարլայլին՝ հիշեցնելով, որ «հռետորը պատասխանատու է միայն նրա համար, ինչ արտաբերում են նրա շուրթերը... Ինչո՞ւ ազատություն չտալ Ձեր սրամտությանը, խանդավառությանն ու փիլիսոփայությանը և հանդես չգալ որպես մի բարի **իշխանավոր**, որպիսին և է՝ ողջախոհ հռետորը»²⁹: Այդուհանդերձ, խնդիրը խորքային էր նաև այն առումով, որ Քարլայլը, իր պորիտանական աշխարհայացքից ելնելով, խորշում էր ճանաչումից ու փառքից, որոնք բաժին էին ընկնելու իրեն ի հետևանս հանրային բանախոսությունների, և որոնք նա համարում էր «ամենից ծանր նգովքը», որ Աստված կարող է դնել մարդու վրա³⁰:

Բանախոսությունների առաջին շարքի ընթերցման ժամանակ «**Times**» ամսագիրը Քարլայլին՝ իբրև հռետորի տված գնահատականում նկատում էր, որ թեև նրա խոսքին «պակասում են տեխնիկական նրբությունները, բայց հընթացս ելույթի հետզհետե ինքնատիրապետում ձեռք բերելով՝ նա ի հայտ է բերում հրապարակային խոսքարվեստի մի շարք բարձր ու վսեմ որակներ»³¹: Քարլայլն աստիճանաբար յուրացնում էր բանախոսության արվեստը, և արդեն 1838 թ. գրականության պատմության վերաբերյալ երկրորդ շարքի ներկայացման ընթացքում նա որոշակիորեն հաղթահարել էր հանրային խոսքի հանդեպ իր տագնապը³², իսկ հեղափոխություններին նվիրված երրորդ շարքի մեկնարկից առաջ Էմերսոնին հղած նամակում հայտնում էր իր վերագտած վստահության մասին³³: Բանախոսությունների այս երրորդ շարքն էլ ավելի մեծ հաջողությամբ պսակվեց, իսկ լսարանն ավելի մեծաթիվ ու առավել երևելի ունկնդիրներից էր բաղկացած³⁴:

1839 թ. նախավերջին շարքից առաջ Քարլայլը գրեթե վճռել էր, որ այն հանրային բանախոսությունների իր վերջին շարքն է լինելու: Այդուհանդերձ, առջևում հերոսների ու հերոսականի մասին չորրորդ և վերջին շարքն էր, որը Քարլայլի՝ իբրև հռետոր-բանախոսի մեծագույն հաղթանակն էր նշանավորելու³⁵: Ըստ Մ. Գոլդբերգի՝ այս շարքի վիթխարի հաջողությունն ու ինքնատիպությունը պայմանավորված էին մի շարք հանգա-

28 Owen Dudley Edwards. "The Tone of the Preacher". Carlyle as Public Lecturer in *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*, in Thomas Carlyle. *On Heroes, Hero-Worship, and the Heroic in History*. Edited by David R. Sorensen and Brent E. Kinsler, p. 200.

29 Նույն տեղում, էջ 201:

30 Տե՛ս Michael K. Goldberg, *Introduction*, էջ xxv:

31 Նույն տեղում, էջ xxiv: Քարլայլի չորս շարքով ներկայացված բանախոսություններին ներկա գտնված մարդկանց և նրանց տարաբնույթ արձագանքների մասին տե՛ս Richard Herne Shepherd, նշվ. աշխ.:

32 Տե՛ս Michael K. Goldberg, *Introduction*, էջ xxv: Իր մի քանի նամակներում Քարլայլը գանգատվում էր հանրային ելույթների ու բանախոսությունների հետևանքով նույնիսկ իր առողջական վիճակի վատթարացումից (տե՛ս հատկապես *Letters*, vol. 12, էջ 141):

33 Տե՛ս Michael K. Goldberg, *Introduction*, էջ xxv:

34 Քարլայլի կնոջ Ջեյն Ուելչի վկայությամբ՝ եզրափակիչ բանախոսությունը Քարլայլի՝ մինչ այդ կարողացած ամենից փայլուն բանախոսությունն էր (տե՛ս նույն տեղում, էջ xxvi):

35 Տե՛ս նույն տեղում, էջ xxvi:

մանքներով³⁶: Բանախոսությունների նախորդ թեմաներում մեկնությունը կցկտուր ու անհետևողական էր, մինչդեռ տվյալ դեպքում առկա էր յուրահատուկ և պարզորոշ մի թեմա, որն ի մի էր բերում բոլոր վեց բանախոսությունները՝ դարձնելով մեկ ամբողջություն³⁷: Ուստի նրա «**Հերոսների մասին**» շարքն աչքի է ընկնում թեմայի քննության իր խորությամբ և նախորդ շարքերի պես պատմամշակութային հարցերի լոկ ամփոփ տեսություն չէ: Եվ վերջապես՝ հերոսականի թեման առավել հոգեհարազատ էր Քարլայլին և հարիր՝ նրա մտակերտվածքին ու ոճին:

3. Հերոսը և հերոսականը. գաղափարի ծագումն ու հասունացումը

Թեև գիտնականները հետազոտում էին հերոսի ու հերոսականի տարբեր հիմնախնդիրները, սակայն նրանք քննության էին առնում այդ երևույթի գլխավորապես փիլիսոփայական, քան պատմական հայեցակերպերը: Գրականության մեջ հերոսականի թեման մեծապես մասն էր կենսագրական ժանրի՝ արգելք հանդիսանալով պատմաբանի կողմից թեմայի ուսումնասիրությանը: Հիրավի, պատմության գրության **դրապաշտական** (positivistic) մեթոդաբանությունը սահմանվել էր մի կողմից՝ ի հակադրություն **գրական պատմության**, մյուս կողմից՝ **մտահայեցական** (speculative) **փիլիսոփայության**³⁸: Ի վերջո, քանի որ գրականությունը զանց առնվեց դրապաշտական պատմագրության կողմից, ուստի փիլիսոփայությունը միակ ասպարեզը մնաց, որտեղ հերոսականի թեման որոշակի տեղ ուներ: Արդ, Քարլայլն առաջինն էր, որ դեմ գնաց իր ժամանակի հոսանքին՝ ներկայացնելով հերոսի ու հերոսականության մեկնության առաջին փորձը ժամանակի **բարոյափիլիսոփայական** ու **պատմագիտական** ուրույն հղացքներով³⁹:

Հերոսների ու հերոսապաշտության թեման Քարլայլի մտածիրում շոշափելի էր տակավին 1824 թ. սկսյալ⁴⁰. ուսմունքի առանձին վկայություն-

36 Տե՛ս նույն տեղում:

37 Տե՛ս նույն տեղում:

38 Պատմագրության ու պատմավեպի փոխհարաբերությունների ակունքների մասին տե՛ս Mark Phillips. "Macaulay, Scott, and the Literary Challenge to Historiography", in Journal of the History of Ideas. Vol. 50, No. 1 (Jan. - Mar., 1989), էջ 117-133:

39 Մինչ Քարլայլը կենդանի հետաքրքրություն էր ցուցաբերում այս թեմայի նկատմամբ, հերոսական առաջնության նախորդ դասական ընկալումն այլևս ի չիք էր դարձել: Հերոսականի մասին վաղ, նոր և արդի հայացքների միջև կապող օղակ կարելի է դիտել թերևս ժան-ժակ Ռուսոյի «**Քննախոսություն հերոսին ամենից անհրաժեշտ առաջնության կամ հերոսական առաջնության վերաբերյալ**» երկը (1751) (տե՛ս Jean-Jacques Rousseau: "The Discourses" and Other Early Political Writings (Cambridge Texts in the History of Political Thought), ed. & transl. by V. Gourevitch. Cambridge: Cambridge University Press, 1997, էջ 305-316):

40 Թեպետ արդեն իսկ 1822 թ. ապրիլի 27-ին եղբորը հղած նամակում Քարլայլը հայտնում էր, որ մտադիր է մի հոդված հեղինակել հետևյալ խորագրով «**Ակնարկ Քաղաքացիական պատերազմների և Անգլիական Համագործակցության մասին**»: Այն ոչ թե տվյալ դարաշրջանի պատմությունն էր ներկայացնելու, այլ ավելի շուտ փորձ «ցույց տալու ազգային խառնվածքի որոշ հատկանիշներ (որ այնժամ ի հայտ են եկել)՝ հիմնավորելով դիտար-

ներ ու կռահումներ առկա են նրա մի շարք հոդվածներում, օր.՝ «Գյոթե» (1828), «Շիլլեր» (1831), «Սըր Վալտեր Սքոթ» (1838. «հերոսապաշտությունը նախասկզբնական հավատամքն է... և լինելու է մարդկության առաջնային ու վերջնական դավանանքը»⁴¹): Ուստի հերոսականն առանցքային ստորագություն էր Քարլայլի մտահայեցողության մեջ, և առավել վաղ շրջանի մի քանի նախնական մեկնություններից հետո այն հիմնականում սևեռում դարձավ նրա հետագա բովանդակ գրույթի մեջ⁴²: Հերոսների պաշտամունքը Քարլայլը համարում էր հասարակության հիմքը և «կրթության ու [դաստիարակության] գլխավոր նպատակը»⁴³, ինչը հատկանշական էր ոչ միայն նախընթաց հերոսական դարերին, այլև «հավետ կենդանի է մարդկային հոգում/սրտում և անգամ այս մեռյալ օրերին լոկ [պատեհ] առիթի է սպասում՝ ի հայտ գալու և բոլոր մարդկանց համակելու դրանով՝ [այդու] վերստին կենդանի շունչ հաղորդելով [հանուր] աշխարհին»⁴⁴:

Թեմայի շուրջ Քարլայլի վաղ ստորումների վրա ազդել են ի մասնավորի **Յ. Գ. Ֆիխտեի** «Վասն կրթյալի էության» (1806), **Յ. Վ. ֆոն Գյոթեի** «Վիլիելմ Մայյթերի ուսումնառության տարիները» (1796)⁴⁵ և **Յ. Գ. Հայնդի** «Կրոնի հավաքական տիպերի տեսություն» («Theorie der sämmtlichen Religionsarten», 1799), ինչպես նաև անգլիացի ժամանակների գանազան երկերը: Ինքնին հասկացությունը Քարլայլը կարող էր փոխառած լինել **Գ. Հյումի** «Կրոնի բնական պատմություն»-ից (1757), որում հերոսապաշտությունը դիտվում է որպես **բազմաստվածության** (պոլիթեիզմ) ձև, որը ծագում է գերագանց ունակությունների տեր «մահկանացուներին աստվածացնելու» ձգտումից⁴⁶:

Հարկ է նշել, սակայն, որ նախքան Քարլայլը կծանոթանար **հանձարի ու կրթյալի** (Ֆիխտե) մասին գերմանական երկերին, նրա մտածիրում արդեն իսկ ուրվագծված էր հերոսի ու հերոսականի մասին հայեցակարգը: Հետևաբար Քարլայլի տեսությունը **յուրահատուկ ու անկախ** ուսմունք էր՝ զգալիորեն գերծ արտաքին բովանդակային ազդեցություններից: Հետագո-

կումներս [պատմության] այդ մեծ բեմահարթակում ամենից կարկառուն դերակատարների՝ Քրոմվելի, Լոդի, Ջորջ Ֆոքսի, Միլթոնի, Հայդի [ևն] իմ կերտած մտավոր պատկերներով (mental portraits)» (Letters, vol. 2, p. 94. Two Note Books of Thomas Carlyle, from 23rd March 1822 to 16th May 1832. Ed. Charles Eliot Norton. New York: Grolier, 1898, p. 20, որում Քարլայլը ինտերակտիվ հարցադրում է անում առ այն, թե «ինչպես են այդ ազնիվ մտքերն ի հայտ եկել այն ժամանակներում»): Քարլայլի այս նախագիծը չիրագործվեց, բայց դրանում արդեն առկա էին այն սաղմերը, որոնց հատմանցումը տեսնելու ենք «Հերոսների մասին»-ում:

41 Thomas Carlyle. Essays on Literature, p. 278.

42 Տե՛ս Raymond Williams. Culture and Society, 1780-1950. New York: Garden City, 1958, էջ 83:

43 Thomas Carlyle. "Goethe's Works", in Essays, vol. 2, p. 395.

44 Thomas Carlyle. Essays on Literature, p. 154.

45 Գյոթեի այս երկը Քարլայլին անգլերեն է թարգմանել 1824 թ.՝ վիկտորիանական միջավայրում նշանավորվող իր մոտեցրը որպես գերմանական գրականության ու մշակույթի մեկնաբանի: 1824 թ. հունիսի 24-ին Գյոթեին հղած նամակում Քարլայլը գրում էր. «Ձեզ հանդիպելու հույսն իմ երազանքների շարքում է: Ձեզ ճանաչելուց ի վեր շատ սրբեր են ի չիք դարձել իմ գրական օրացույցից, այնինչ Ձեր անունն այնտեղ է՝ գրված ավելի վառ տառերով, քան երբևէ» (Letters, vol. 3, p. 87):

46 Տե՛ս David Hume. The Natural History of Religion. 1757. Ed. H. E. Root. Stanford: Stanford University Press, 1957, էջ 40: Քարլայլի երկի ստույգ ու հավանական աղբյուրների մասին տե՛ս B. H. Lehman. Carlyle's Theory of the Hero: Its Sources, Development, History, and Influence on Carlyle's Work: A Study of a Nineteenth Century Idea. Durham, N. C.: Duke University Press, 1928, էջ 130-170 և Charles F. Harrold. Carlyle and German thought: 1819-1834. Hamden • London: Archon Books, 1963, էջ 180-196:

տողները համերաշխ են այն ուշագրավ դիտարկման շուրջ, որ **Քարլայլը գերմանական մտքից վերցնում ու յուրացնում էր լոկ այն հասկացություններն ու գաղափարները, որոնք հարմար էին գալիս նրա կալվինական աշխարհայացքին, այլորեն՝ փոխառյալ այդ հայացքներն ու հղացքները նա պարզապես համապատասխանեցնում կամ հարմարեցնում էր իր ըմբռնումներին**⁴⁷: Հետևաբար, ինչպես որ կրոնական ու փիլիսոփայական գաղափարների պարագայում, գերմանական ուսմունքների դեպքում ևս Քարլայլը ոչ թե և ոչ այնքան բովանդակությանն էր հետամուտ, որքան որ մի **համապարփակ մտակաղապարի**, որը պարզապես ձև կհաղորդեր նրա ուսմունքին⁴⁸: Պատահական չէ, որ հետազոտողներից շատերն ուշադրության են առնում այն հանգամանքը, որ գերմանական փիլիսոփայությանը (հատկապես՝ Կանտի) Քարլայլը տիրապետում էր լոկ մակերեսային մակարդակով:

Մյուս կողմից՝ առ պատմություն Քարլայլի հետաքրքրությունը գլխավորապես կենսագրական էր⁴⁹, միտված պատմության մեջ ամենից երևելի դերակատարների ու նրանց գաղափարների մեկնությանը⁵⁰: Քարլայլն ընդդիմանում էր Դ. Հարթլիի ու Դ. Հյումի՝ մարդկային հոգին սուս կգայությունների ու գաղափարների հանգեցնող և գործառող մեխանիզմ համարող ըմբռնումներին⁵¹, քանզի հերոսների իր մեկնության մեջ Քարլայլը նրանց խառնվածքի ու հոգեկերտվածքի ամբողջական բացահայտումը բացառում էր՝ մշտապես նկատի ունենալով նրանց **առեղծվածի ու խորհրդավորության** տարրերը: Ուստի ականավոր անհատների հանդեպ Քարլայլի հիացմունքը մղեց նրան առավել վայել ու հարիր կերպով քննության առնելու հերոսի ու հերոսականի գաղափարները՝ գերծ գիրքոնյան **ցինիզմից** և Հյումի **մեխանիկական հոգեբանությունից**⁵²:

Ընկերային կյանքի մեկնության իր տակավին առաջին փորձում՝ **«Ժամանակի նշանները»** (1829) հոդվածում, Քարլայլը նկատում էր, որ «մարդիկ մտքով ու սրտով... մեքենայական (mechanical) են դառնում: Նրանք կորցրել են հավատը ամեն տեսակի անհատական ջանքի ու բնական գոյության հանդեպ... Նրանց բովանդակ ճիգերը, հարաբերություններն ու

47 Տե՛ս Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 25-26:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 181:

49 Հարկ է նկատել, սակայն, որ պատմության կենսագրական չափումը և հերոսների տեսությունը Քարլայլի պատմահայեցողության ընդամենը մեկ ասպեկտն են ներկայացնում, և մնացյալ առումներով այն բնավ անհատականորեն ու ատոմիստական չէ (թեև Քարլայլը հերոսական անհատին պատկերավոր կերպով համարում էր **բովանդակ պատմության ակունքը**): Քարլայլը հասարակությունը դիտում էր իբրև մեկ ամբողջ. **«հավաքական անհատ»**, իսկ ընկերային նման հղացքների հիմամբ պատմության տեսությունը պետք է հաշվի առնի հավաքական ջանքերն ու մեծ անհատների հերոսական սխրանքները (տե՛ս René Wellek. *Confrontations. Studies in the intellectual and literary relations between Germany, England, and the United States during the nineteenth century.* Princeton, New Jersey: Princeton University Press, 1965, էջ 100-101):

50 Տե՛ս Charles F. Harrold, նշվ. աշխ., էջ 180:

51 Տե՛ս նույն տեղում, էջ 22-23:

52 Տե՛ս նույն տեղում, էջ 8:

կարծիքները հանգում են մեխանիզմին և մեխանիկական բնույթի են»⁵³: Ըստ նրա՝ 19-րդ դարը «հերոսական, կրոնական և փիլիսոփայական կամ բարոյական դարաշրջան չէ, այլ ամենից առաջ մեխանիկական: Այն մեխանիզմի դարաշրջան է՝ այդ բառի արտաքին ու ներքին ամեն մի իմաստով...., միջոցները նպատակներին հարմարեցնող դարաշրջան»⁵⁴, որի «հոգևոր կաթվածը» Քարլայլը վերագրում էր դրա **էթոսի** մակերեսայնությանը: Ուստի 1840 թ. հանրային բանախոսություններում Քարլայլը մտավախություն էր հայտնում իր ժամանակաշրջանում հերոսապաշտության բովանդակագուրկ էության մասին, մի բան, որ նա ավելի վաղ նկատել էր արդեն իսկ «**Sartor Resartus**»-ում (1833-1834)՝ կոչելով այն «փքուն գովազդ» ու «խաբեություն»⁵⁵:

Թ. Քարլայլի այս բանախոսությունները նշանավորեցին հերոսի ու հերոսականի թեմայի շուրջ խորհրդածության բեղուն շրջանի բարձրակետը⁵⁶, որը նա քննության առավ գրական, պատմական ու քաղաքական դիտանկյուններից⁵⁷: Ուստի պատահական չէ, որ այն կերպափոխեց Քարլայլի՝ որպես մտածողի գրական ու փիլիսոփայական կենսուղին⁵⁸:

Թ. Քարլայլը վճռական էր՝ թեման քննարկելու իր ժամանակի քաղաքական ու իմաստասիրական ավանդական տեսություններից անդին⁵⁹: Անուր կառչելով հերոսների իր **պատմական հայեցակարգից**՝ նա հետամուտ էր հիմնահարցը քննելու ներկայի գերակա «**խստ**»-**երից** ու «**իզմ**»-**երից** անդին, բայց և մտադիր չէր լիովին զանց առնել դրանք⁶⁰: Հետազոտողներից **Դեյվիդ Սորենսենը** նկատում է, որ Քարլայլի հիմնանպատակը տիրապետող բենթամյան փիլիսոփայությանը մարտահրավեր նետելն էր, մի հայեցակարգ, որն առաջնային նշանակություն էր տալիս բանական էգոիզմին՝ միտված «երջանիկ» ու կազմակերպված հասարակության կայացմանը⁶¹:

Իր «Դեոնարոլոգիա կամ բարոյագիտություն» (1834) երկում Զ. Բենթամը հերոսների պաշտամունքը բնորոշում է որպես ամենահետադիմականը (retrograde) ժամանակի սոցիալական ուսմունքներից. «Առ հերոսներ հիացմունքը ամենից վնասակարն է, և այն, որ պատրանքները պետք է սրիպեն մեզ հիանալ այն ամենով, ինչը որ առաքինությունը մեզ սովորեցնում է արել ու խորշել, մարդկային տկարության ու անկրության ամենից տխուր վկայություն»

53 Centenary Edition of Carlyle's Works, vol. 27, pp. 62-63.

54 Նույն տեղում, էջ 58-59: Տե՛ս նաև **Louise M. Young**, Thomas Carlyle and the Art of History. Philadelphia, 1939, էջ 114:

55 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, in Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and the Heroic in History. Edited by **David R. Sorensen** and **Brent E. Kinser**, էջ 3:

56 Տե՛ս **Owen Dudley Edwards**, նշվ. աշխ., էջ 199:

57 Տե՛ս նույն տեղում:

58 Տե՛ս նույն տեղում:

59 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 6:

60 Տե՛ս նույն տեղում, էջ 7:

61 Տե՛ս նույն տեղում:

ներից է»⁶²: Փոխարենը, ըստ Բենթամի, պահանջվում է հերոսների այնպիսի ուսումնասիրություն, որն ի ցույց է դնում ավանդական հայեցակարգերի սխալներն ու մոլորությունները և առաջադրում բանաձևեր ու սահմանումներ, որոնք համարելի են **օգտապաշտական** (Utilitarian) բարոյականության դրույթների հետի⁶³:

Ահա առ **օգտապաշտական հերոսներ** բենթամյան այս ընկալմանը⁶⁴ կտրական հակադրությունն էր, որ մղեց Քարլայլին հետազոտելու թե՛ ման միանգամայն այլ հայացքով: Թ. Քարլայլի աշխարհայացքը խստիվ ներհակ էր ժամանակի ահագնացող արդյունաբերականացմանը և դրա հիմամբ տնտեսական հարաբերությունների նոր ձևերին, որոնք հասարակական-քաղաքական կյանքի հատկորոշիչ էին դիտում թափընթաց տեխնոլոգիական առաջադիմությունը, զարգացումն ու արտաքին հաջողությունները, իսկ տնտեսական նվաճումները համարում ներքին գործության միակ չափանիշը: Ուստի հերոսի ու հերոսականության մասին իր պատկերացումներում Քարլայլը մեկնարկում էր գերազանցապես (եթե ոչ բացառապես) բարոյական ըմբռնումներից: Հերոսականը սուկ արտաքին սոցիալական պատճառականությամբ (դետերմինիզմ) պայմանավորելու պարագան մաս էր կազմում նաև վիկտորիանական մտավոր միջավայրի՝ 18-րդ դարից ժառանգած բանապաշտության (ռացիոնալիզմ), ինչն ավելի ուշ ամրապնդվեց նաև պատմության հետազոտման գիտական հղացքի ձևավորմամբ: Ուստի հերոսների ու հերոսապաշտության իր ինքնատիպ ու աննախադեպ մեկնությամբ Քարլայլը ջախջախիչ հարված հասցրեց հերոսականության բենթամյան ընկալմանը՝ ընդգծելով օգտապաշտության անպտուղ արժեքանությունը⁶⁵ և մերժելով Բենթամի «կույր (eyeless) **հերոսականությունը**»⁶⁶: Բենթամյան այս հայեցակարգն իր հերթին սերում էր թերևս Լուսավորականության դարաշրջանի՝ արտաքին հեղինակություններից ազատագրման և դրա՝ իբրև հիմնարար սկզբունքի դեմ ըմբոստության դրույթից⁶⁷: Այնինչ հերոսականի որակական հատկանիշները Քարլայլի համար գլխավորապես **մտավոր շնորհ** են, իսկ հերոսը վստահություն ու հավատարմություն է ձեռք բերում իր նպատակների ազնվությամբ ու շարժառիթների անկեղծությամբ:

62 Նույն տեղում:

63 Տե՛ս նույն տեղում:

64 Բենթամի այս գաղափարը կյանքի էր կոչելու շտուկնդացի գրող **Սեմյուել Սմայլը** (1812-1904) վիկտորիանական հաջողակ գյուտարարների ու ձեռնարկատերերի մասին իր կենսագրական բնույթի երկերում (տե՛ս **Christopher Harvie**. “Wild Annandale Grapeshot.” Carlyle, Scotland, and the Heroic, in Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and the Heroic in History. Edited by **David R. Sorensen** and **Brent E. Kinsler**, էջ 269, 271):

65 Տե՛ս **David R. Sorensen**, *Introduction*, էջ 7:

66 Տե՛ս **Thomas Carlyle**. On Heroes, Hero-Worship, and the Heroic in History. Edited by **David R. Sorensen** and **Brent E. Kinsler**, էջ 145: Տե՛ս նաև **Christopher Harvie**, նշվ. աշխ., էջ 271:

67 Տե՛ս **Charles F. Harrold**, նշվ. աշխ., էջ 62:

Շերուսի ու հերոսականի քննության մեկ այլ էական դրդապատճառ էր, այսպես կոչված, «Անգլիայի կացության հարցը»⁶⁸: Ժամանակի մտավորական խոսույթի համատեքստում առաջ քաշված բոլոր լուծումները Քարլայլն անօգուտ էր համարում, քանզի դրանք սուկ «մեխանիկական» ու արտաքին միջոցներ էին⁶⁹: Փոխարենը պահանջվում էր «դինամիկ» լուծում՝ նպատակավ կերպափոխելու մարդկանց աշխարհայացքն ու մտահորիզոնը և ոգեշնչելու ու առաջնորդելու նրանց նոր մարգարեի, նոր հերոսի կողմից⁷⁰:

1840 թ. մարտի 2-ին եղբորը հղած նամակում Քարլայլը գրում էր. «Ես խոսելու եմ աստվածների, մարգարեների, քահանաների, արքաների, բանաստեղծների, ուսուցիչների (վեց տիպեր) մասին և թերևս անվանեմ այն (բանախոսությունների շարքը – Գ. Ճ.) «Վասն հերոսականի»: Օդիսը, Մուհամմադը և Քրոնվելն իմ ընտրած կերպարներից երեքն են: Ես ուզում եմ ցույց տալ, որ «հերոսների պաշտամունքը երբեք չի դադարում», և որ այն երկրպագության գլխավոր կամ միակ ձևն է, ըստ էության»⁷¹: Իսկ մեկ ամիս անց՝ ապրիլի 2-ին, նույն հասցեատիրոջը Քարլայլը գրում էր. «Թեման ոչ այնքան պատմական է, որքան **ուսուցողական** (didactic): Այն մասամբ նոր կառույց է [ենթադրում], որը կարելի է չափ պետք է ստանան»⁷²: Այս նոր մոտեցման հարցում պատմաբանից անցումը սոցիալական տեսաբանի նոր հնարավորություններ ընձեռեց Քարլայլին, որը քաջ գիտակցում էր նաև իր բանախոսությունների տպագիր տարբերակի շահութաբերությունը՝ մտորելով դրանց հնարավոր հրատարակության շուրջ⁷³:

4. Թ. Քարլայլի գիրքը

Ունկնդիրների հարաճուն թվաքանակը⁷⁴ և բարձր եկամուտը համոզեցին Քարլայլին, որ բանախոսություններն արժանի են առավել հաջող գրական ձևակառուցման: 1840 թ. մայիսի 12-ին եղբորը հղած նամակում Քարլայլը գրում էր. «...Այնտեղ թղթակից էր ուղարկվել ինձ համար [բանախոսությունները գրի առնելու]: Ես տեսա առաջին բանախոսության ուրվագիծը (sketch), որը հույժ աղքատիկ էր: Ավելի ու ավելի եմ համոզվում, որ ինքս պետք է գլուխ բերեմ գործը և հրատարակեմ այն գրքի տեսքով»⁷⁵:

68 Քարլայլի հղացքն է (տե՛ս Thomas Carlyle. Chartism. New York: John B. Alden, Publisher, 1885, էջ 5-10):

69 Տե՛ս Hugh R. Trevor-Roper. History and the Enlightenment. Ed. by John Robertson. New Haven and London: Yale University Press, 2010, էջ 232:

70 Տե՛ս նույն տեղում:

71 Letters, vol. 12, p. 67.

72 Նույն տեղում, էջ 94:

73 Տե՛ս Owen Dudley Edwards, նշվ. աշխ., էջ 204:

74 «Շերոսների մասին» շարքի ներկայացմանն այցելել է 180 ունկնդիր: Նախորդ երեք բանախոսությունների ժամանակ ունկնդիրների թիվը մոտ 120 էր (տե՛ս Christopher Harvie, նշվ. աշխ., էջ 262):

75 Letters, vol. 12, p. 143.

Բանախոսությունները գրքի վերածելու գործընթացը դժվարին էր: Քարլայն ավելի մեծ ժամանակ հատկացրեց գրքի հրատարակությանը, քան բանախոսություններին նախապես պատրաստվելուն⁷⁶, ուստի գրքային տարբերակն էապես տարբերվելու էր բանավոր ներկայացվածից: Քարլայն ի սկզբանե մտադիր էր վաճառել սղագիր տարբերակը, բայց ի վերջո թերի և անբավարար համարեց այն: 1840 թ. օգոստոսի 1-ին եղբորը հղած նամակում նա այդ սղագրությունները բնորոշում էր որպես «տաղտկալի ու դժգոյն»⁷⁷: Մասնավորապես առաջին բանախոսության սղագրությունը, որ պատրաստել էր «Ֆրեյզերի հանդես»-ի թղթակիցը, Քարլայլը պատկերավոր կերպով հատկանշում էր որպես «գազազրկված սողայաջուր»⁷⁸, ուստի և վճռեց անձամբ վերաշարադրել բանախոսություններն իր նախապատրաստական գրառումներից⁷⁹ և թղթին հանձնել «եթե ոչ այն, ինչ ասվել էր դրանց ընթերցման ժամանակ», ապա առնվազն այն, ինչ նա կարող էր և պետք է ասել⁸⁰:

Բանախոսությունների շարքի վերնագիրը՝ «**Հերոսների, հերոսապատության և մարդկության պատմության մեջ հերոսականի մասին**», Քարլայլը գրեթե նույնությամբ պահպանեց նաև 1841 թ. տպագիր հրատարակությունում, բացառությամբ «մարդկության» բառի⁸¹: Արդեն իսկ վերնագիրը միտված էր ընդգծելու գաղափարի փոփոխական բնույթը, որը «մշտահով... ու տարբեր է ամեն մի [նոր] դարաշրջանում»⁸²:

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, նկատենք հետևյալը. Քարլայլի բանախոսություններն ու գիրքը աննախադեպ նորամուծություն նշանավորեցին Վիկտորիանական դարաշրջանի մտածիրում, և հերոսի ու հերոսականի մասին նրա տեսությունը վերջին վրձնահարվածն էր գաղափարական այն շարժման մեջ, որին վիճակված էր տասնամյակներ շարունակ սոցիալ-մշակութային գերակա գործոն լինել դարի մտակերտվածքում: Քարլայլի ինքնատիպությունը նրա մեկնակերպի խորությունն ու նշանակալիությունն էր և այն հարուստ պատկերավորությունը, որով նա օժտեց

76 Իր ընկերներին ու բարեկամներին հղած մի շարք նամակներում Քարլայլը մեծ դժգոհություն էր հայտնում իր բանախոսություններից համարելով դրանք «տաղտկալի տափակություն», «ոչինչ չարժեցող» և «կրակը նետելու» բաներ. «Իմ գրած և ոչ մի բանից երբևէ այսքան դժգոհ չեմ եղել: Դրանք ոչ մի նոր բան չեն պարունակում...» (Letters, vol. 12, p. 210, 230):

77 Տե՛ս նույն տեղում, էջ 210:

78 Տե՛ս նույն տեղում, էջ 144:

79 Տե՛ս Owen Dudley Edwards, նշվ. աշխ., էջ 205:

80 Տե՛ս Letters, vol. 12, էջ 144:

81 Տե՛ս David R. Sorensen, *Introduction*, էջ 6:

82 Thomas Carlyle. On Heroes, Hero-Worship, and the Heroic in History. Edited by David R. Sorensen and Brent E. Kinsler, p. 52. Քարլայլն ընդունում էր, որ իր դարաշրջանում հերոսների պաշտամունքի անկումը փաստ է, բայց և ազդարարում, որ այն երբեք չի դադարում և մշտապես հանդես է գալիս նոր ձևերով՝ որպես սփոփանք մի դարաշրջանում, որտեղ ամեն բան դեպի վախճան է ընթանում (տե՛ս Albert J. LaValley. Carlyle and the Idea of the Modern: Studies in Carlyle's Prophetic Literature and Its Relation to Blake, Nietzsche, Marx, and Others. New Haven: Yale University Press, 1968, էջ 245): Այս առումով հերոսների ու հերոսականի քարլայլյան փառաբանումն ու անգիջում դիմադրությունն ահագնացող ժողովրդավարությանը դարի մի շարք մտավորականների այն մտահոգությունն էին հարուցել, թե Քարլայլը կորցրել է կապը այն նույն դարաշրջանի հետ, որին նա հույս ուներ ուղղելու իր խոսքը և շշուկի լուծումներ առաջարկելու ծառայած մարտահրավերների համար:

այդ թեման⁸³: Ավելին՝ իր ընտրած հերոսների պատմական կերպարներով նա փորձ արեց վերակերպելու Մուհամմադի, Քրոնվելի ու Նոքսի հանրային ընկալումը⁸⁴ իրավամբ հեղափոխական հայացքներ հանդես բերելով նշյալ դեմքերի վերագնահատման հարցում և հիմք դնելով պատմության հոլովույթում նրանց դերակատարության նորովի քննությանը պատմագիտության մեջ: Աներկբա է, որ այդ կերպարների մասին իր **մարտահրավերային** հայացքներով Քարլայլը մտադիր էր անակնկալի բերել իր ունկնդիրներին, որոնք մեծավ մասամբ անգլիական քաղաքական ու կրոնական հաստատությունների ներկայացուցիչներ էին⁸⁵: Դրանից զատ՝ սա անմիջական խզում էր նաև դարիս պատմության գիտակարգի հանդեպ տիրապետող այն ընկալումներից, որոնք, ըստ Քարլայլի, զանցառում էին մարդու անհատականությունը և պատմությունը դիտում իբրև **անդեմ ուժերի խաղ**՝ «տրամաբանական» հիմնավորում գտնելով «դրապաշտական [այնպիսի] կեղծարարությունների մեջ», ինչպիսին էր, օրինակ, **Թոմաս Բոքլի** (1821-1862) կողմից պատմության մեջ **օրենքներ** ու **օրինաչափություններ** հայտնաբերելու սնանկ փորձը⁸⁶: Նմանօրինակ հայացքի ներքո հերոս-առաջնորդն էապես չի տարբերվում մյուսներից և ընդամենը կոչված է փութացնելու պատմական առաջընթացը, որն այսպես թե այնպես տեղի է ունենալու: Քարլայլը քաջատեղյակ էր իր ժամանակի այս տեսություններին, սակայն հակված էր այն մտայնությանը, որ «մարդն աստվածային ծագում ունի, [նա] հանգամանքների [ու] անհրաժեշտության գերին չէ, այլ դրանք հաղթական կերպով սեփական կամքին ենթարկողը»⁸⁷:

Ահա իր ժամանակի այս համատարած պատկերացումներն էին, որ Քարլայլը ձեռնամուխ եղավ հերքելու իր գրքում և փոխարենը ստուգիվ ամրագրելու այն ընկալումը, որ «մարդկության արձանագրած ամեն մի հերթական առաջընթաց տեղի է ունեցել շնորհիվ վերին աստիճանի օժտված այն անհատների...., որոնց Նախախնամությունը նախընտրելի դարերում առաքել է ընդմեջ մարդկության»⁸⁸: Սա է այն «մեկնակետը, այն հիմնադրույթը, որ Քարլայլը մտադիր էր լուսաբանել.... «**Հերոսների մասին**»-ում»⁸⁹, ինչն ամբողջական քննության կառնվի սույն հրապարակման երկրորդ մասում:

83 Տե՛ս **Michael K. Goldberg**, *Introduction*, էջ xxxiv:

84 Տե՛ս նույն տեղում:

85 Տե՛ս նույն տեղում, էջ xxix:

86 Տե՛ս **R. G. Collingwood**. *The Idea of History* (Revised Edition). With Lectures 1926-1928. Edited with an introduction by **Jan Van Der Dussen**. Oxford University Press, 1994, էջ 144:

87 **Thomas Carlyle**. *Essays on Literature*, p. 165.

88 **J. A. Froude**. *Thomas Carlyle: A History of His Life in London, 1834-1881*. 2 vols. London, 1884, vol. 1, pp. 175-176.

89 Նույն տեղում:

Գևորգ Ա. Ճաղարյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատմության տեսության և փիլիսոփայության, 18–19-րդ դդ. եվրոպական պատմագրության ու քաղաքական իմաստասիրության, պատմության և արվեստի աղերսների հիմնախնդիրները:

Էլեկտրոնային հասցե՝ georgeworldhistory@gmail.com

Summary

THOMAS CARLYLE’S “ON HEROES, HERO-WORSHIP, AND THE HEROIC IN HISTORY”

Part one: the motives and prerequisites

Gevorg A. Tshagharyan

Key words - hero-worship, **Victorian** age, enthusiasm, T. Carlyle, heroes, lecture, R. W. Emerson, **positivistic** historiography, J. G. Fichte, D. Hume, German thought, **Mechanical** age, J. Bentham, Utilitarianism.

The article examines the perceptions of heroic and hero-worship in Victorian age. The subject of special focus are the prerequisites and stimuli for the appearance of these terms, their manifestations and development on the background of the mental climate of the époque. In this vein, an attempt is made to examine Thomas Carlyle’s theory of the hero and the heroic within the framework of the intellectual and theoretical assumptions of the time under consideration.

In each of four consecutive years, from 1837 to 1840, T. Carlyle delivered a series of lectures in London. Each lecture series was a great success, and the last of the four produced one of the most famous books of the author, “On Heroes, Hero-Worship, and the Heroic in History”.

T. Carlyle became interested in heroes and hero-worship early in his career. In the 1831 essay on “Schiller”, for instance, he declared that “great men are the Fire-pillars in this dark pilgrimage of mankind; they stand as heavenly Signs, ever-living witnesses of what has been, prophetic tokens of what may still be, the revealed, embodied Possibilities of human nature”.

The heroic was a central element in Carlyle’s thinking and was to become, after several anticipatory treatments in various essays and occasional reviews, the leading principle of all his later social theory. The subject was also a major

Victorian preoccupation, widely shared by Carlyle's fellow Victorians who, said Edmund Gosse, turned "admiration" from "a virtue into a religion, and called it Hero-Worship". In this sense, one of the reasons for the enormous vogue of hero-worship is the cult of *enthusiasm*. For hero-worship, in the words of its major prophet, is "*infinite* admiration", and the worshiper an enthusiast who "can love his hero or sage without measure, and *idealize*, and so, in a sense, *idolize* him". This perception marks a striking reversal of the rationalistic attitude in the previous century. When D. Hume and E. Gibbon submitted the heroic to the cold glance of reason, they aimed to see it as a mask to hide selfish ambition or else a patent form of fanaticism and delusion. But when enthusiasm became a virtue, the Romantic Victorian eye brought with it the power to see men as a hero and the heart to respond with appropriate worship.

T. Carlyle's 1840 lectures were, therefore, an *incursion* into the mainstream of Victorian thought, and his theory of the hero in some ways was merely the final, high doctrine in a movement which had been for some years under way. Carlyle's originality lay not so much in his choice of subject matter as in the depth and seriousness of his treatment and the imaginative richness with which he invested it.

T. Carlyle also set out to counter certain fashionable contemporary attitudes in which history was considered mainly as an impersonal play of forces. According to such views, great men were, as James Anthony Froude remarked, "the *creatures* of their age, not the *creators* of it, scarcely even its guides". In line with egalitarian sentiments, the individual leader was judged no differently from his fellows, and was seen to be merely in a position to hasten a development which would have eventually taken place without him. Carlyle sought to counteract such prevailing notions in his 1840 lectures and to posit instead the view that (in Froude's words) "every advance which humanity had made was due to special individuals supremely gifted in mind and character, whom Providence sent among them at favoured epochs". Hence, at a time when the Bible and the Church were no longer able to satisfy the religious instincts of many Victorians, the heroic and hero-worship, like nature and great men, could be welcomed as another manifestation of the divine spirit working in the world.

Thus, when the Victorian period began, all the prerequisites for hero-worship were present: the enthusiastic temper, the conception of "great man", the revival of Homeric mythology and medieval ballad, the popularity of W. Scott and G. Byron, and the living presence of Napoleonic soldiers and military leaders. In the fifty years after 1830 the hero-worship was a dominant factor in English culture.

ТОМАС КАРЛЕЙЛЬ: «О ГЕРОЯХ, ПОЧИТАНИИ ГЕРОЕВ И ГЕРОИЧЕСКОМ В ИСТОРИИ»

Часть первая: мотивы и предпосылки написания

Геворк А. Тшагарян

Ключевые слова - почитание героев, **Викторианская** эпоха, энтузиазм, Т. Карлейль, герои, лекция, Р. У. Эмерсон, **позитивистская** историография, И. Г. Фихте, Дэвид Юм, немецкая философия, **Механическая** эпоха, И. Бентам, утилитаризм.

В статье рассматриваются воззрения о героизме и почитании героев в Викторианскую эпоху. Предметом особого внимания являются предпосылки и побуждения возникновения такого образа мышления, её развития и проявления на фоне умонастроений эпохи. В этом отношении, делается попытка рассмотреть теорию Томаса Карлейля о героях и героическом в рамках интеллектуальных и теоретических представлений того времени.

С 1837 по 1840 год Т. Карлейль читал серию лекций в Лондоне. Каждая серия лекций имела неоспоримый успех, а последняя из четырех серий в результате стала подспорьем для одного из его самых известных книг: «О героях, почитании героев и героическом в истории».

Т. Карлейль начал интересоваться темой героического ещё в начале своей карьеры. В статье «Шиллер» (1831) он, например, заявлял, что «великие люди являются огненными столпами в этом мрачном странствии человечества; они стоят как небесные знамения, вечно живые свидетели истории, пророческие символы грядущего, открытые и воплощенные возможности человеческой природы».

Героическое было центральным элементом его мышления и должно было стать, после некоторых предварительных трактовок в различных эссе и случайных рецензиях, ведущим принципом для всего его последующего образа мышления. Отметим, что проблема эта была также одной из главных умозрений, широко разделяемых другими мыслителями, которые, по словам Эдмунда Госса, превратили «восхищение» из «добродетели в религию и назвали это поклонение героям». В этом ключе одна из причин огромной популярности почитания героев - это культ *энтузиазма*. Ибо поклонение героям, по словам Карлейля, это «*безграничное* восхищение», а поклоняю-

щийся - энтузиаст, который «может безмерно любить своего героя или мудреца и *идеализировать*, а значит в некотором смысле даже *идолизировать* его». Это восприятие знаменует собой разительную противоположность рационалистической позиции предыдущего столетия. Когда Д. Юм и Э. Гиббон подвергали героическое холодному взгляду разума, они склонны были видеть в герое маску, скрывающую эгоистические амбиции, или же явную форму безумия и заблуждения. Но когда энтузиазм стал рассматриваться как добродетель, романтический викторианский взгляд принес с собой способность видеть в людях героев и сердца, отвечающее соответствующим поклонением.

Другими словами, лекции Т. Карлейля 1840 года были *вторжением* в русло Викторианской мысли, и его теория героя в некотором смысле стала завершающим штрихом в этом движении. Оригинальность Карлейля заключалась не столько в выборе темы, сколько в глубине и монументальности его трактовки.

Т. Карлейль также стремился противостоять некоторым современным взглядам, в рамках которых история рассматривалась главным образом как безличная игра сил. Согласно этим воззрениям, великие люди были, как заметил Джеймс Энтони Фруд, «*созданиями* своего века, а не его *создателями*, едва ли даже его проводниками». В соответствии с эгалитарными настроениями эпохи, индивидуальный лидер оценивался не иначе, чем его соотчичи, и считалось, что он просто в состоянии ускорить развития событий, которые в конечном итоге произошли бы и без его участия. В своих лекциях 1840 года Карлейль намеревался опровергнуть эти господствующие представления и вместо этого выдвинуть точку зрения, согласно которой (по словам Фруда) «каждый прогресс, достигнутый человечеством, претворили в жизнь великие личности, в высшей степени одаренные умом и моральными качествами, которых Провидение посылало среди людей в благоприятные эпохи». Следовательно, в то время, когда Библия и Церковь уже не могли удовлетворить религиозные инстинкты многих викторианцев, героизм и почитание героев, подобно природе и великим людям, можно было принимать как еще одно проявление божественного духа, действующего в мире.

Таким образом, до начала викторианской эпохи все необходимые предпосылки почитания героев были налицо: восторженное состояние души, идея «великого человека», возрождение гомеровской мифологии и средневековых баллад, популярность В. Скотта и Дж. Байрона, живое присутствие солдат и полководцев, участвовавших в наполеоновских войнах. В течение пятидесяти лет после 1830 года культ героев был одним из доминирующих факторов британского культурного самосознания.